# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՒ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

**«Ազգային եւ հոգեւոր զորացյալ կյանքով, ամուր միասնությամբ է, որ պիտի շենացնենք մեր Հայրենիքը, բարօր դարձնենք մեր ժողովրդի կյանքը, պաշտպանենք արդար մեր իրավունքները, աներեր պահենք մեր երկրի կայունությունը, աներեր՝ գալիքի հանդեպ լավատեսությունը...».**

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշեց մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության հրաշափառ տոնը:

Հունվարի 5-ի երեկոյան, Միածնաէջ Սուրբ Տաճարում Ճրագալույցի Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Հավարտ Պատարագի կատարվեց նախատոնակ, որից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արարողությանը ներկա Մայր Աթոռի միաբանությանն ու հազարավոր բարեպաշտ հայորդիներին տվեց Տիրոջ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության ավետիսը: Մինչեւ ուշ գիշեր հազարավոր հայորդիներ այցելեցին տոնական լույսերով ողողված համայն հայության հոգեւոր կենտրոն եւ Մայր Տաճարի կանթեղներից վառելով մոմերը՝ Տիրոջ Ս. Ծննդյան ավետաբեր լույսն իրենց օջախները տարան:

Հունվարի 6-ին՝ Ժամը $10^{30}$-ին, խաչերով ու խաչվառներով զարդարյալ հայրապետական թափորը շարժվեց Վեհարանից եւ զանգերի ավետաբեր ղողանջների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ամպհովանիով առաջնորդեց Մայր Տաճար, ուր Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը: Սրբազան արարողության ժամանակ Նորին Սրբությանը որպես առընթերականներ սպասավորում էին Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը:

Ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց համայն հայությանը Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով:

Վեհափառ Հայրապետը հորդորեց համայն հայ ժողովրդին Հայրենիքում և ազգային կյանքում առկա խնդիրները վճռել «մեր հավատքից բխող շնորհներով՝ միմյանց հանդեպ սիրո, արդարամտության, նվիրումի ու նախանձախնդրության, հայրենասիրության ու ազգասիրության ոգու զորությամբ» և չերկնչել դժվարություններից ու նեղություններից:

Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր ողջույնները հղեց Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին և ի սփյուռս աշխարհի համայն հայ ժողովրդին:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն՝ ի հիշատակ Քրիստոսի Սուրբ Մկրտության: Հատուկ աղոթքներով ու շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվեց Ավետարանով, Ս. Խաչով ու սրբագործվեց սրբալույս Մյուռոնով: Օրհնված ջուրը վերջում բաժանվեց ժողովրդին:

Այս տարի Մայր Տաճարում ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր Հայաստանի շինարարների միության նախագահ, «Հորիզոն 95» ՍՊԸ տնօրեն Գագիկ Գալստյանը:

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության և մշակույթի մշակներ:

Տոնական Ս. Պատարագից հետո Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը, որ արդեն 5 ամիս է ինչ ուսումնառության նպատակով գտնվում է Վարշավայում, հունվարի 6-ին, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ Վարշավայի Սուրբ Աստվածածնի Վերափոխման Ուկրաինական Կաթոլիկ Եկեղեցում Սուրբ Պատարագ մատուցեց տեղի հայորդիների համար:

Սուրբ Պատարագի ավարտին տեղի ունեցավ Ջրօրհնեքի արարողություն, և Սուրբ Մեռոնով օրհնված ջուրը բաժանվեց ժողովրդին՝ որպես առողջություն և բժշկություն նրանց հոգիների և մարմինների:

Այսօրվա Պատարագն առանձնանում էր նրանով էր, որ Եկեղեցին ամբողջությամբ

լեցուն էր հայ հավատացյալներով: Պատարագին ներկա էին Լեհաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պարոն Աշոտ Գալոյանը, հյուպատոս Տիկին Լյուբով Նիզարյանը:

Հոգեշնորհ Հայր Սուրբը շարունակելու է Սուրբ Ծննդյան Պատարագներն ու Ջրօրհնեքի արարողությունները Լեհաստանի այլ հայաշատ քաղաքներում, այդ թվում՝ հունվարի 8-ին՝ Գդանսկում, հունվարի 10-ին՝ Լոձում և հունվարի 16-ին՝ Կրակովում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 6-ին, Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնին Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազան արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, պետական այրեր, նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ և համայնքային գործիչներ: Վրաստանի անկախացումից հետո, սա առաջին նախագահական այցն էր Հայ Առաքելական եկեղեցի: Վրաստանի նախագահի այցը մեծ խանդավառություն էր առաջացրել՝ արժանանալով ներկաների ջերմ և անկեղծ ընդունելությանը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը շնորհավորեց հավատացյալներին տոնի առիթով և ողջույնի խոսք ուղղեց Վրաստանի նախագահին: Սրբազանը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Վրաստանի նախագահին և վրաց ժողովրդին:

Թեմակալ առաջնորդն իր շնորհավորական խոսքն ուղղելով Վրաստանի նախագահին՝ մեկ անգամ ևս կարևորեց հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, երկու քույր եկեղեցիների միասնական քրիստոնավանդ առաքելությունը: Առաջնորդը Վրաստանի նախագահի գործունեությունը նմանեցրեց երկու ժողովուրդների կյանքում պատմական մեծ դերակատարում ունեցած Դավիթ Շինարարի հետ, որ նույնպես ժամանակին այցելում էր մուսուլմանական մզկիթ, հրեական սինագոգ, քրիստոնեական եկեղեցի:

Տ. Վազգեն եպիսկոպոսը նախագահի ուշադրությունը հրավիրեց Վրաստանի հայությանը մտահոգող երկու հիմնահարցերի վրա, որոնք են. Վիրահայոց թեմին և Վրաստանում գործող ավանդական մյուս կրոնական համայնքներին իրավաբանական կարգավիճակ տալու, հայկական պատմական եկեղեցիները թեմին վերադարձնելու և այդ տաճարների պահպանության հարցերը:

Իր ողջույնի խոսքն ու Ս. Ծննդյան շնորհավորանքները հայ ժողովրդին և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու հովվապետին ուղղեց Վրաստանի նախագահ

Միխեիլ Սաակաշվիլին՝ կարեւորելով երկու եկեղեցիների դարավոր բարեկամությունն ու փոխհամագործակցությունը: Նախագահն իր մեծ հարգանքն ու գնահատանքն արտահայտեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդեպ՝ ընդգծելով Վիրահայոց թեմի առաջնորդի բացառիկ առաքելությունը հավատացյալներին ճշմարիտ ճանապարհով ուղղորդելու, եկեղեցական գործունեությունը պատշաճ կազմակերպելու եւ հոգեւոր արժեքների պահպանման ու զարգացման գործում:

Ս. Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնական հանդիսությունը շարունակվեց Թբիլիսիի առաջնորդանիստ Ս. Գեւորգ եկեղեցում, որին ներկա էին Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան եւ քաղաքային խորհրդի նախագահ Զաալ Սամադաշվիլին: Նրանք նույն օրը առավոտյան իրենց մասնակցությունը բերեցին Ս. Էջմիածին եկեղեցում մատուցված Ս. Պատարագին: Միջոցառմանը իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ դեսպանատան աշխատակիցներ, հայ մտավորականներ եւ թիֆլիսաբնակ հայեր:

Ներկաներին ողջունեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան: Վերջինս շեշտեց հայերի մեծ ներդրումը Թբիլիսիի կառուցման եւ շենացման գործում՝ 2010 թվականի ընթացքում Վրաստան ժամանած ավելի քան կես միլիոն հայության այցելությունը համարելով երկու ժողովուրդների միասին ապրելու եւ արարելու լավագույն ապացույց:

Հանդիսությունն ընթացավ տոնական համերգով, ավարտին ներկաներին բաժանվեց մատաղ:

Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Ս. Ծննդյան եւ Աստվածահայտնության արարողությունն ու Վրաստանի նախագահի այցը լայնորեն լուսաբանվեց Վրաստանի ԶԼՄ-ներով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հունվարի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ուր հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու նրանց ստանձնած Մայր Աթոռի ծրագրերի ընթացքը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է գավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծապուրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Սույն թվականի հունվարի 10–ին Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչները՝ առաջնորդությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան՝ Հրաչ Սիլվանյանի այցելեցին Վրաց Ուղղափառ Եկեղեցու պատրիարքարան, ուր նրանց դիմավորեց Վրաց Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերասիմ միտրոպոլիտը և ուղեկցեց Պատրիարքի պաշտոնական ընդունարան:

Նորին Սրբություն Իլիա Բ ջերմորեն ընդունեց Վիրահայ պատվիրակությանը և Վրաց եկեղեցու անունից շնորհավորեց հայ ժողովրդին և Հայ եկեղեցուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ՀՀ նախագահին, Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առիթով: Հանդիպմանը շնորհավորական և ողջույնի խոսքով հանդես եկան՝ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ՀՀ Արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, <<Վրաստան>> թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայտնի մտավորական և հասարակական գործիչ՝ Գիվի Շախնազարը և Վրաստանում հայ գործարարների միության ներկայացուցիչ Սամվել Աղեկյանը: Վիրահայ պատվիրակությունը Համայն Վրաց Պատրիարքին փոխանցեց նաև Վրացահայ հայտնի գեղանկարիչ Լեւ Բոյախչեւի աշխատանքը: Հանդիպմանը մասնակցում էին նաև Վրաստանի հայ գործարարների միության ներկայացուցիչներ և Պատրիարքական փոխանորդ Թեոդոր միտրոպոլիտը:

Հանդիպումը անցավ շատ ջերմ մթնոլորտում: Համայն Վրաց Պատրիարք Իլիա Բ մեկ անգամ ևս իր հարգանքը և բարեկամական սերը արտահայտեց համայն հայության հանդեպ և հորդորեց հավատարիմ մնալ դարերից եկող հայ-վրացական եղբայրությանն ու բարեկամությանը, հույս հայտնելով, որ միասնական ուժերով կհաղթահարվեն մեր եկեղեցիներին և ժողովուրդներին հուզող հարցերը:

Իլիա Պատրիարքը վիրահայ պատվիրակությանը նվիրեց Պատրիարքարանի մառանից գինի՝ հույս հայտնելով, նաև որ այս տարի կկայանա Նորին Սրբություն Գարեգին Բ եղբայրական այցը Վրաստան, և ինքը պատրաստ է ջերմորեն ընդունելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին և վերահաստատելու հայ–վրացական եկեղեցական հնամենի բարեկամությունը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ԻՐԱՔԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԿՈՊԵՆՀԱԳԵՆՈՒՄ

Հունվարի 11-14-ը Կոպենհագենում տեղի ունեցավ Իրաքի կրոնական առաջնորդների արտահերթ վեհաժողովը, որին իրենց մասնակցությունը բերեցին ինչպես Իրաքի Սուննի եւ Շիա ուղղությունների առաջնորդները, այնպես էլ քրիստոնեական համայնքների առաջնորդներն ու պառլամենտի անդամներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցում էր Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արք. Ասադուրյանը:

Վեհաժողովն ընդունեց հռչակագիր, որում մասնավորապես ասվում է, որ Իրաքի քաղաքական վերածննդի համար կենսական նշանակություն ունեն երկրի բնակիչների անվտանգության ապահովումը եւ վստահության վերականգնումը սեփական երկրի նկատմամբ, որի գրավականներից մեկն էլ քրիստոնյաների նկատմամբ կիրառվող բռնության եւ հալածանքների իսպառ կանխարգելումն է: Ըստ հռչակագրի՝ հանրային իրավունքի եւ իրավահավասարության սկզբունքների գործնականացումը պետք է դրվի Իրաքի սահմանադրության հիմքում, իսկ ծառայությունը պետական մարմիններում պետք է իրականացվի առանց կրոնական խտրականության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԵՐՔՈՒՄ «ՈՐՏԵՂ Է ԱՄԱՆՈՐՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ընթերցելով «Չորրորդ իշխանություն» թերթում լույս տեսած «Որտեղ է Ամանորն անցկացրել կաթողիկոսը» հոդվածը՝ հարկ ենք համարում իրազեկել խմբագրությանը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ամանորի առաջին օրերին չի «հանգրվանել Փարիզում, Մարսելում, Լիոնում»: Իսկ եթե խմբագրությանն իրապես հետաքրքրում է, թե որտեղ է Նորին Սրբությունն անցկացրել Ամանորը, ապա տեղեկացնում ենք. դեկտեմբերի 31-ի կեսգիշերին Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը հանդիսապետել է Գոհաբանական մաղթանքի արարողությունը, հունվարի 1-ին ներկա է գտնվել Սուրբ Պատարագին, ապա Վեհարանում ընդունել է Մայր Աթոռի միաբանությանը: Ամանորի հաջորդ օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ունեցել է մի

շարք հանդիպումներ: Հունվարի 5-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետել է Ճրագալույցի Պատարագը, իսկ հունվարի 6-ին մատուցել է Ս. Ծննդյան պատարագ:

Նորին Սրբությունը հունվարի 9-ին ուղևորվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ուր հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ:

ՎԱՀՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՆԸ

Հունվարի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը հանդես եկավ Մոսկվայի երաժշտության միջազգային տան Սվետլանովյան սրահում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը ժամանել էր Մոսկվա՝ մասնակցելու հոգևոր երաժշտության Ս. Ծննդյան առաջին փառատոնին՝ կազմակերպված Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա-ի օրհնությամբ:

Մայր Աթոռի երգչախումբը Ռուբեն Շարբաթյանի գլխավորությամբ կատարեց միջնադարյան և ժամանակակից հեղինակների հայ հոգևոր երգեր: Հնչեցին Նարեկացու, Կոմիտասի, Եկմալյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Օհան Դուրյանի հոգեպարար ստեղծագործությունները, որոնցից յուրաքանչյուրը Տիրոջն ուղղված փառաբանություն է, Տիրոջ գթասրտությանն արժանանալու աղոթք-խնդրանք: Մենակատարներ Սարգիս Թորոսյանի, Կարինե Ավետիսյանի, Առնոլդ Քոչարյանի, Արմինե Օջախյանի կատարմամբ հնչեցին «Տեր Ողորմեա», «Ո՜վ զարմանալի», «Սուրբ- Սուրբ», «Հաւուն, հաւուն», «Գթա, Տեր» երգերը:

Ս. Ծննդյան առաջին այս փառատոնի նախաձեռնողներից է նաև Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմը: Համերգի ավարտից հետո թեմակալ առաջնորդ Տ.Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը հանդիպեց երգիչների հետ, շնորհավորեց նրանց անկեղծ ու գեղեցիկ կատարման համար: «Թող այս հավատարմությամբ ու նվիրումով, որ ծառայում եք Ազգին, Եկեղեցուն, Աստված օրհնի ձեզ: Մենք էլ ուրախանանք և զորեպլեղվենք, որ մեր ազգը հզոր է այսպիսի զավակներով»,-ասաց սրբազան հայրը երգիչներին:

Ս. Ծննդյան մոսկովյան փառատոնին մասնակցում էին նշանավոր երգչախմբեր աշխարհի տարբեր երկրներից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Առավոտ» օրաթերթի հունվարի 14-ի համարում ընթերցեցինք «Մի առաջարկություն» վերնագրված հրապարակումը, որի հեղինակը դրվատանքով է անդրադառնում զինված ուժերի հետ Ռուս Եկեղեցու համագործակցությանը՝ նույնը առաջարկելով Հայ Եկեղեցուն: Այս առնչությամբ կցանկանայինք փարատել հոդվածագրի անկեղծ մտահոգությունը՝ տեղեկացնելով, որ հոգևոր ծառայությունը հայոց բանակում նորություն չէ:

Նորանկախ Հայաստանի բանակում առաջին հոգևոր սպասավորները ճեմարանավարտ 8 սարկավագներ էին, որ 1997 թվականին երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի և այն ժամանակ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ ծառայության մեկնեցին ՀՀ Ազգային բանակ: Նպատակն էր զինծառայողներին հաղորդակից դարձնել Քրիստոսի Ավետարանին և քրիստոնեական հավատքի սկզբունքներին, դաստիարակել նրանց քրիստոնեական-բարոյական սկզբունքներով և ազգային-հայրենասիրական ոգով:

2000թ. սեպտեմբերին Մայր Աթոռի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրվել է Հոգևոր ծառայության կանոնադրությունը: 2007 թվականին հոգևորականի ներկայությունը հայոց բանակում վավերացվեց նաև ՀՀ Ազգային ժողովի ընդունած «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով: Այժմ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ ՀՀ զինված ուժերում իրենց հոգևոր ծառայությունն են բերում ավելի քան 40 հոգևոր սպասավորներ՝ աբեղաներ, քահանաներ և սարկավագներ՝ գլխավորությամբ ՀՀ զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Զորամասերում զինծառայողները մշտապես զգում են հոգևորականի ներկայությունը. օրվա ընթացքում, մարտական պատրաստության պարապմունքների հետ մեկտեղ, իրականացվում են նաև հոգևոր դասաժամեր, որոնց շնորհիվ նրանք ձեռք են բերում հոգևոր գիտելիքներ, հաղորդ են դառնում մեր ժողովրդի սրբազան ժառանգությանը: Զորամասերում կազմակերպվում են տարբեր հոգևոր արարողություններ, տոնական հանդիսություններ: Կիրակի և հատկապես տաղավար տոներին զինվորներն այցելում են զորամասերին մոտ գտնվող եկեղեցիներ և մասնակցում եկեղեցական արարողությունների: Մի շարք զորամասերում արդեն իսկ կառուցվել են մատուռներ:

Լիահույս ենք, որ տարեցտարի ընդարձակվող հոգևոր ծառայությունն իր առաքելության բարեհաջող իրագործմամբ պիտի կարողանա առավել զորացնել մեր պաշտպանների մեջ հավատը և հայրենասիրության ոգին:

ՎԱՀՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

## ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ 2011 Թ. ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը լույս է ընծայել 2011թ. օրացույցներ:

Այս տարի լրանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական օրացույցի տպագիր հրատարակության 145-րդ տարին: Այն իր մեջ բովանդակում է եկեղեցական տարվա մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: 2011թ. պաշտոնական օրացույցը կազմել են Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը եւ Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը: Օրացույցի վերջում զետեղված են նաեւ տեղեկություններ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ թեմերի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության եւ պաշտոնեության վերաբերյալ:

Հրատարակչական բաժինը լույս է ընծայել նաեւ 2011թ. սեղանի օրացույց: Ամենօրյա ժամապախտպակներին զուգահեռ այն բացատրություններ է տալիս բոլոր տոների եւ սրբոց հիշատակության օրերի մասին:

Այս տարի Մայր Աթոռը հրատարակել է նաեւ պատկերավոր օրացույց՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանի նկարներով: 1960-ական թթ. երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ օժանդակությամբ Հ. Ռուխկյանը ստեղծել է Հայաստանի պատմական եկեղեցիների շուրջ 120 պատկերներ, որոնցից լավագույնները զարդարում են այս օրացույցի էջերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Հունվարի 18-19-ը աշխատանքային այցով Հռոմ մեկնեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարցերով պատասխանատու, ԵՀԽ կենտրոնական կոմիտեի գործադիր վարչությունում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Վիգեն արք. Այքազյանը:

Հունվար 18-ին Սրբազան Հայրը հանդիպել է Վատիկանի պետքարտուղար Նորին Սրբազնություն Տարչիսիո կարդինալ Բերտոնեի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Խոսվել է համագործակցության առավել զարգացման, տարբեր երկրներում եւ այդ թվում Վրաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների իրավունքներին առնչվող խնդիրների շուրջ:

Այցի ընթացքում Սրբազան Հորն ընկերակցել է Կաթոլիկ Եկեղեցու՝ Քրիստոնեական միությունը խրախուսող քահանայապետական խորհրդի Արևելյան եկեղեցիների հետ հարաբերությունների բաժնի պատասխանատու հայր Գաբրիել Քուիքը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԱԽԱԳԱՀԵՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

Ուրբաթ Յունուար 21-ին Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. նախագահեց Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան վիճակի թեմական խորհուրդի յունուար ամսուան ժողովին:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան, որպէս նախագահ թեմական խորհուրդին, բարի գալուստ մաղթեց Նորին Սրբութեան եւ իր շնորհակալութիւնը յայտնեց որ այս բացառիկ առիթը կ'ընձայուի մասնակից դառնալու համար համայն հայութեան Հայրապետին տեսիլքներուն եւ մտածումներուն:

Թեմական խորհուրդի ատենապետ Տիար Ասկըր Թ-աղոսեան իր գնահատանքը յայտնեց Նորին Սրբութեան՝ Իր ցուցաբերած հայրապետական առաջնորդութեան համար եւ խոստացաւ շարունակել զօրավիգ կանգնիլ Վեհափառ Հայրապետի առաքելութեան՝ թէ՛ Մայր Հայրենիքի եւ թէ՛ սփիւռքի մէջ:

Ամենայն հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Միացեալ Նահանգներ եկած էր փարուչս յունուար ամսուան սկիզբերը՝ հանդիպում ունենալու համար համայնքին ղեկավարներուն հետ:

Յունուար 21-ի կէսօրուան ճաշ-ժողովի ընթացքին՝ թեմական խորհուրդի անդամները իրենց բարի ցանկութիւնները փոխանցեցին Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետին: Առաջնորդ Սրբազան Հայրը տեղեկացուց թէ այս տարի Նորին Սրբութեան ծննդեան 60-ամեակն է, եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը որոշած է այս հանգրուանը նշել հաստատումովը համաշխարհային հիմնադրամի մը՝ ի նպաստ նոր հոգեւորականներու կրթութեան ու դաստիարակութեան: Թեմական խորհուրդի անդամները խոստացան իրենց մասնակցութիւնը բերել այս ծրագիրին եւ այս կապակցութեամբ պատշաճ հանդիսութիւններ կազմակերպել Արեւելեան թեմին մէջ:

Անցնող տասը տարիներու ընթացքին, 300 սարկաւագներ հոգեւորական ձեռնադրուած են, եւ ծրագիր մը կայ Հայաստանի մէջ այս տարի նոր դպրեվանք մը բանալու: Ամէն տարի, նոր ձեռնադրուած կարգ մը հոգեւորականներ Արեւելեան թեմ կը հրաւիրուին եւ փորձառու հոգեւոր հովիւներու հետ գործակցելով մօտէն կը ծանօթանան Միացեալ Նահանգաց ծխական կեանքին եւ կը պատրաստուին թեմին մէջ լման ժամանակով հոգեւոր հովիւի պաշտօն ստանձնելու:

Վեհափառ Հայրապետը Իր գնահատանքը յայտնեց թեմակալ առաջնորդին եւ Ամերիկայի Հայ Եկեղեցւոյ ղեկավարներուն եւ արտայայտուեցաւ ապագայի Իր ծրագիրներուն մասին, որոնց մաս կը կազմեն պատրաստութիւնը նոր հոգեւորականներու, վերանորոգութիւնը պատմական կոթողներու, կառուցումը նոր եկեղեցիներու եւ կրթական հաստատութիւններու, եկեղեցւոյ վարչական գործողութիւններու օրինական ձեւի մը վերածումը, հաղորդակցական ճարտարարուեստի միջոցաւ ժողովուրդին հասնելու կարելիութեան ընդլայնումը եւ հաւատացեալներու կրօնական փորձառութեան խորացումը:

Որպէս արդիւնք այս ջանքերուն՝ Նորին Սրբութիւնը ըսաւ որ Հայաստանի ժողովուրդը աւելի կը մօտենայ իրենց հաւատքին եւ Քրիստոնէական կրօնքը իր պատմական դերը կը կատարէ:

Նորին Սրբութիւնը ըսաւ որ այս բոլոր զարգացումները աւելի պիտի յառաջիմեն Հայ Եկեղեցւոյ վարչական զօրաւոր կառոյցով: Ըսաւ նաեւ որ Արեւելեան թեմի կանոնադրութիւնը օրինակելի է եւ շեշտեց որ բոլոր թեմական առաջնորդութիւններու կանոնադրութեանց մաս պէտք է կազմէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանաւորութեամբ եւ 2009 տարուան աշնան Մայր Աթոռի մէջ գումարուած թեմական ներկայացուցիչներու կողմէ պատրաստուած կանոնադրութեան ուղեցոյցը:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց՝ եկեղեցական եւ հովուական հարցերու կապակցութեամբ թեմական խորհուրդի անդամներուն կողմէ ուղղուած հարցումներուն, եւ ապա ժողովի փակման աղօթքը արտասանեց:

«Մեզի համար օրհնութիւն է հանդիպում մը ունենալու պատեհութիւնը Վեհափառ Հայրապետին հետ: Մեր եկեղեցւոյ հանդէպ Իր հայրական հոգատարութիւնը եւ մեր համայնքային կեանքի զարգացման ի նպաստ Իր հետաքրքրութիւնը մեծապէս ներշնչիչ են», ըսաւ Անկըր Թադոսեան:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Հունվարի 25-29-ը Հռոմում տեղի ունեցավ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ երկխոսության հանձնախմբի ամենամյա հանդիպումը:

Հանդիպման ընթացքում մասնավորապես անդրադարձ կատարվեց երկու հիմնական թեմաների՝ «Քրիստոնեական միությունը եւ Եկեղեցիների փոխհարաբերությունները մինչեւ Ե դարը» եւ «Վանականության դերը Եկեղեցում»:

Հանդիպմանն Արեւելյան Ուղղափառ եկեղեցիները ներկայացնում էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ղպտի, Ասորի, Եթովպիայի, Էրիթրեայի եկեղեցիները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ ժողովին Ամե-

նայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացնում էին Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էին Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը և Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեզյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 27-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր բանակի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմի անդամներ:

Արարողության ընթացքում Վրթանես Սրբազանը հավուր պատշաճի ներկայացրեց հայոց բանակի կարևորությունն ու դերը մեր պետականության պահպանման և ամրապնդման գործում: Սրբազան հայրն իր խոսքում մասնավորապես նշեց. «Յանկացած երկրի զորությունը, խաղաղությունը հաստատողն ու ամրապնդողը բանակն է: Քանի դեռ երկրի վրա փիեզերածավալ խաղաղություն և մարդկանց միջև հաճություն չի հաստատվել, բանակն անհրաժեշտ պայման է մնում պետությունների ներքին անդորրն ապահովելու համար: ... Աղանդների մի ամբողջ շարք քարոզում է հեռու մնալ զենքից և կոչ է անում զենքի չդիմել՝ թշնամու կողմից մեր երկրի ու ընտանիքների պղծվելու դեպքում անգամ: Դրա փոխարեն հայ եկեղեցականը, ինչպես պատմության ոլորապտույտներում, այնպես էլ այսօր մի կողմից իր գործնական լուման է բերում երկրի պաշտպանության գործին՝ ծառայելով բանակում և իր բարոյական զորակցությունը ցույց տալով զինվորին, մյուս կողմից՝ եկեղեցում աղոթք բարձրացնելով հայ զորականի և զորավարի անսասանության և ուժականության համար»:

Ս. Պատարագից հետո տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց ներկաներին: «Գեղեցիկ ավանդույթ է ձևավորվել, որ ամեն տարի բանակի օրվա կապակցությամբ Հայոց բանակի հրամանատարական կազմը, գլխավորությամբ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, գալիս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իր աղոթքն առ Աստված բարձրացնելու և իր ուխտը Սուրբ սեղանի առջև կատարելու հավատավոր հայ զավակների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ: Աղոթելու և հայցելու, որ Տերն անսասան պահի Հայաստան երկիրը և հզոր ու հաղթական՝ հայոց բանակը:



Սուրբ Պատարագ Հայոց Բանակի օրվա առիթով

Հայրենիքը հայոց նվիրական սուրբ հողն է՝ դարերի պատմությամբ նվիրագործված, մեր հայրերի ու զավակների սուրբ արյունով սրբագործված: Հայրենիքը նաեւ մեր մշակույթն է, մեր հոգեւոր արժեքները, մեր Եկեղեցին, հայոց ընտանիքն ու հայ մարդը, որի պաշտպանությանը կոչված է ծառայելու Հայոց բանակը: Ահա թե ինչու մենք նվիրական պարտք ենք համարում հանապազօրյա աղոթք բարձրացնել առ Աստված, որպեսզի բանակը միշտ լինի զորեղ ու հաղթական» - նշեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով պարգեւատրեց ՀՀ ՊՆ առաջին տեղակալ, փոխնախարար գնդապետ Դ. Տոնոյանին եւ ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Է. Ապրիամովին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

13 յունուար 2011 թուականին Գերմանիոյ Խորհրդարանի Նախագահ Նորպէրթ Լամմէրթի հրաւէրով հանդիպում մը տեղի ունեցաւ խորհրդարանի շէնքին մէջ, Գերմանիոյ Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներու հետ: Յոյն, Ղպտի, Ասորի, Եթովպական Եկեղեցիներու առաջնորդներու հետ հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ Գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան, ընկերակցութեամբ Լեռնային Ղարաբաղի Գերմանիոյ Ներկայացուցիչ Տիար Յարութիւն Գրիգորեանի:

Հանդիպման նիւթն էր իսլամական երկիրներու մէջ քրիստոնեայ փոքրամասնութիւններու ներկայ քաղաքական վիճակն ու բարձրացող հարցերը:

Նախագահ Լամմէրթ հանդիպման ընթացքին անգամ մը եւս դատապարտելով Եգիպտոսի մէջ Նոր տարուայ գիշերը Ղպտիներու հանդէպ կատարուած ոճիրը, շեշտեց որ հաւատքի եւ կրօնքի ազատութիւնը մարդկային իրաւունքներն են եւ պէտք է ամենուրեք ապահովուին եւ պաշտպանուին: Ներկայ առաջնորդները տեղեկութիւններ տուին իրենց եկեղեցիներուն իսլամական երկիրներուն մէջ ունեցած խնդիրներու մասին եւ շնորհակալութիւն յայտնեցին Տիար Լամմէրթին այս հանդիպման համար, որը կը նկատեն համերաշխութեան լաւագոյն նշան գերմանական պետական իշխանութեանց:

16 Յունուար 2011 կիրակի օրը Քէօլնի Alte Feuerwache անուն մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Պոլսոյ մէջ 4 տարիներ առաջ սպաննուած հայ լրագրող եւ ԱԿՕՍ շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Տինքի համար յուշերեկոյ մը, մասնակցութեամբ մօտ 400 հայ եւ օտար ներկաներու: Ծրագրի կազմակերպիչն էր Hrant Dink Forum Koeln ընկերակցութիւնը, որուն մաս կը կազմեն Քէօլնէն եւ շրջակայքէն զանազան մարդասիրական հաստատութիւններ եւ մշակութային կեդրոններ:

Ներկաներուն իր խօսքն ուղղեց նաեւ առաջնորդ Գարեգին սրբազանը, շեշտը դնելով Թուրքիոյ մէջ ազատ խորհելու եւ խօսելու մարդկային բնական իրաւունքի հա-

մար Հրանդ Տինքի փարած քաջ պայքարին վրայ։ Յուշարձանի յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին տոքթ. Ռաֆֆի Քանդեան, Թ-ուպա Չանտար եւ Տողան Աքհանլը։ Երաժշտական բաժինը ստանձնած էին Սաթիկ Թ-ումեան եւ Սաքինա։

Հրանդ Տինքի մահուան 4 տարելիցին առթիւ 16 յունուարին Հանաուի Հայ Համայնքին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն Սերովբէ վրդ. Իսախանեանի կողմէ։ Արարողութեան ընթացքին յիշուեցան նաեւ այն 23 Ղպտի քրիստոնեաները, որոնք Նոր տարուայ գիշերը Եգիպտոսի մէջ զոհ եղան ոճրագործութեան մը։

Հրանդ Տինքի մահուան 4րդ տարելիցին, 19 յունուարին, Ֆրանքֆուրթի թրքական հիւպատոսարանին առջեւ ցոյց կատարուեցաւ զանազան կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ։ Ապա Ֆրանքֆուրթի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ տեղի ունեցաւ յուշապահակ մը, որուն մասնակցեցաւ նաեւ Սերովբէ վրդ. Իսախանեան։

21 - 30 յունուար 2011 թուականներուն Պէռլինի մէջ տեղի ունեցան 76րդ «Միջազգային Կանանչ Օրեր»ը, որոնք նուիրուած են գիւղատնտեսութեան եւ անոր զարգացման նպատակին։ Կանանչ Օրերուն բազմաթիւ պետութիւններու կողքին կը մասնակցէր նաեւ Հայաստանը։ Այս առթիւ 27 յունուարին Պէռլինի Հայ եկեղեցական համայնքի Նայիրի երգչախումբը, նաեւ համայնքի փոքրիկները երգով ու պարով ելոյթ ունեցան Հայաստանը ներկայացնող տաղաւարին առջեւ։

Քէօլն

Դիւան Առաջնորդարանի